

ԴՈՍՏՈԵՄԿԻ ԵՒ ՕՇԱԿԱՆ. ԱՂԵՐՍՆԵՐ

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ (Հայաստան)

բ. գ. դ., Պրոֆեսոր

*Խ. Աբովյանի անուան ՀՊՄՀ Վ. Պարտիզոնու անուան
հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ
նրա դասասանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
«Միհրոք» Գիտատուտմասկան Կենտրոնի տնօրէն*

Բանալի բառեր – վէպի ժանր, կերպարներ, Ֆեոդոր Դոստոեւսկի, Յակոբ Օշական, քրիստոնէական արժէքներ, կեանքի եւ վէպի ընդգրկումներ, Միխայիլ Բախտին, քաղաքական միտք, գեղարուեստական ընկալում:

Key words: genre of novel, characters, Feodor Dostoyevski, Hakob Oshakan, Christian values, borders of life and novel, Mikhayil Bakhtin, political mind, artistic perception.

Վիպագրութիւնը գոյամարտ է, ժամանակի յորձանքին եւ քմայքնե-
րին պայքարով ընդառաջ գնալու, ինքնութեան սկզբունք ու հայեացք
պաշտպանելու հնարաւորութիւն: Ուրեմն՝ ինչ է այդ դէպքում հայ վիպա-
սանի համար նորագոյն գրականութեան նշանակութիւնը՝ կտրուկ ան-
ցում է կգիտենցիալիզմին, թէ՛ «բազմաձայնութեան» գեղարուեստական
եղանակին, որը խորքով մշակել են Յակոբ Օշականից առաջ Ֆեոդոր
Դոստոեւսկին 19-րդ դարում եւ Մարսէլ Պրուստը 20-րդ դարասկզբին:
Կենսական հարց է սա, որի պատասխանները քննութեան ենթակայ
երկու վիպասանների բնագրերի խորքերում են: Ամէն ինչից զատ՝ այս-
տեղ կայ ենթագիտակցականի ընտրութեան հարց նաեւ հայ արձակա-
գրի եւ տեսաբանի համար, գրականութեան եւ տեսութեան ոլորտներում
«տեղորոշման» մնայուն խնդիր, որը նաեւ 21-րդ դարում շարունակում
է թե՛նով մնալ գրականութեան պատմութեան համապատկերում՝ ի հե-
ճուկս զարգացման տրամաբանութեան կտրուկ տարութերումների:

Յ. Օշականը այս կարգի հարցեր է փորձել լուծել վէպերի փոքրա-
կազմ, իսկ աւելի յաճախ՝ բազմաքանակ հերոսների օգնութեամբ:
Ներաշխարհի անընդմէջ բացայայտման շնորհիւ գաղափարակիր
կերպարների «բազմաձայնութիւնը» զգալի մասով միախառնում է
հեղինակի մեկնական խօսքին՝ նպաստելով գեղագիտական եւ գա-

ղափարական խնդրադրումների յաջորդական հնչողութեանը, ուր միմեանց «հրմշտում են» գրողի հետապնդած միտքն ու հերոսների՝ իր համար անգամ անակնկալ արարքները:

Յ. Օշականի, ինչպէս եւ Ֆ. Դոստոեւսկու համակարգերում ասպարէզ նետուած գաղափարն առաւել առաջնային է ընթերցողի համար, քան հերոսի հոգեբանական այս կամ այն սրտառուչ կամ փոթորկայոյց արարքը: Դիպուկ է նկատել ռուս տեսաբան Միխայիլ Բախտինը. «Այն բանի համար, որպէսզի ճիշդ տեղայնացուի Դոստոեւսկին պատմութեան մէջ, եւ յայտնաբերենք նրա *էական* կապերը նախորդների ու ժամանակակիցների հետ, հարկ է, որ առաջին հերթին բացուի նրա ինքնատիպութիւնը, պէտք է ցոյց տալ Դոստոեւսկու մէջ Դոստոեւսկուն, թէկուզ այն նման բնութագրումից մինչեւ լայն պատմական փնտռուքը կրի միայն նախնական ու մօտաւոր կանխորոշում»¹:

Նոյնն է Յ. Օշականի մօտեցումը, ուր լծուած է ռուս հեղինակի երեւոյթի բացայայտման շարունակական գերխնդրին: «Տոսթեւսկիի բոլոր վէպերը,– յուշում է նա,– կեանքէն յառնող հարցերու կենդանի արարածներու վերաճումները եղան: Ուրիշ խօսքով՝ ռուս վիպասանը ներշնչուեցաւ *արարքներէ*, որոնք, իրենց կարգին, իբրեւ մտածում, գաղափարագրութիւն ո՛չ միայն շրջան կ'ընէին իր շրջապատին մէջ, այլեւ կը շահագրգռէին ամբողջ արեւմտեան քաղաքակրթութիւնը, թերեւս լման մարդկութիւնը»²: Հարցադրումն ինքնին հասկանալի է. եթէ պարզ է, որ ռուս արուեստագէտի կերպարները կարծես սիրով են ընդառաջ գնում վիպագրի՝ իրենց մէջ անվերջ տրոհումներին, ապա հոգեխոյզ մեկնաբանը դրանց կողքին ձգտում է ճանաչել ու կարելորել աշխարհաճանաչ այն մասունքը, որ անխաթար պահպանում են կերպարները իրենց մէջ՝ խարդաւանքների սիրահարից մինչեւ ոճրագործը, մինչեւ յետին խոհարարը, սիրախաղի տրոտուղ կնոջից մինչեւ քրիստոնէական սրբութիւնները մարդու մէջ պահպանել փորձող Ջոսիման:

Ամենատարբեր հերոսները հպատակում են իրենց ծնող հեղինակի քմայքներին, անսում են մարդու մէջ մարդու ու մարդկայինի փրկութեան հաւատին, գեղեցիկի տեսլականին: Բոլորն ընդունում են

¹ Бахтин М., Проблемы поэтики Достоевского, М., изд. “Э”, 2017, с. 12.– Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

² Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատոր տասներորդ / Վկայութիւն, Անթիլիաս, 1982, էջ 169:– Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

գրողի զօրութիւնը մարդկութեան իմացական մտքի վրայ, մարդու ներաշխարհի ծալքերի ռուսական յայտնատեսութիւնը եւ դրա կողքին տեսնում են քաղաքական մտքի առայսօր քննած վիճակների միջեւ ձգուող յարաճուն այս խզումը. «Ռուս ժողովուրդը եւ իր առաքելութիւնը, Արեւելքն ու Արեւմուտքը, կրօնքը եւ գիտութիւնը, խղճմանքն ու մարդկային արդարադատութեան մեքենան, ընդերկիրը (underground) եւ գերերկինքը (մեր հոգիներուն անդունդներուն ու գիտաշխարհին մէջ), հարցեր են՝ յիշելու համար ամէնէն կարկառունները, որոնք ռուս վիպասանին գործերուն յատակ կը հանդերձեն»³:

Կեանքի ընդգրկումը վիպաշխարհի անսպառ ծալքերում առաջնային եւ գրեթէ անլուծելի թուացող գերխնդիր է իւրաքանչիւր արուեստագէտի ստեղծագործական առաջադրութիւններում: Հայ վիպագրութիւնը մնում է մեր գրականութեան ամէնից դժուարին տեղամասը եւ չի կարողանում լուծել գրական նիւթի ընդգրկման հիմնարար հարցը: Ամէն անգամ զայթակղութիւնը ստանում է որոշակի առարկայացում, եւ շփոթւում է գլխատորը. մարդու, անհատի ճակատագրի հարցադրումը իր տեղը զիջում է ժողովրդի ողբերգական հաւաքականութեան խորհրդի դիմաց: Եղեռնի թեման հայ վիպագրութեան մէջ դարձել է նիւթի անցումի գրեթէ պարտադիր անկիւնագիծ:

Յ. Օշականը վէպի գրապատմական համակարգի կառուցման խորքերում գտնում է, որ համաշխարհային մշակոյթի զարգացման ընթացքներում 19-րդ դարի երկրորդ կէսի եւ յատկապէս դարավերջի ռուս գրականութեան խաղացած առաջնորդողի դերը պայմանաւորում է ոչ միայն ռուսական առաջանցիկ մտածողութիւնը, այլեւ Ֆ. Դոստոեւսկու կենսափոխափայլութեան զօրութիւնը: Դա առաքելութիւն է ժողովրդի հաւաքական կենսագրութեան մէջ, իսկ վիպագրի համար՝ մարդկային հոգու ամենախորը յատակագիծը կազմելու առթած հպարտութիւն:

Յ. Օշականի բնագրում հերոսների խաղարկումների մոդէլը միփոքր այլ է. կերպարները ապրում են ինքնիշխան կեանքով եւ կարծես առանձնապէս չեն ուզում «գլուխ դնել» հեղինակի հետ, ընդունում են նրա գերիշխան դիրքը, բայց վերապրում են իրենց սահմանուած վիպական կեանքը, պահպանում են իրենց «ձայնը», դառնում են «բազ-

³ **Նոյն տեղում:**– Ընդգծումները՝ բնագրում – Ս.Դ.:

մաճայնութեան» բաղադրիչ՝ ազգային լարումի հասած ինքնատիպութեամբ: Իսկ Յ. Օշականը անհունօրէն սիրում է նրանց, եթէ, ի հանրկէ, չարը արմատ չի նետել նրանց հոգու խորքերում:

Դա ամրագրում է հայ վիպասանը առաջին հերթին տեսաբանի հայեացքով. նկատելով ռուս վիպագրի կառոյցի ընդհանրական ուրուագիծը՝ խայտաճամուկ հերոսների *քմայքը* եւ դրան յաջորդած *արարքի* (յաճախ նաեւ՝ նախորդած) հոգեբանական հետեւանքների հեղինակի մանրագնին քննութիւնը՝ նա զգուշօրէն տանում է Դոստոեւսկու եւ իր գրական հանգիտութիւնը: «Առէք «Մնացորդաց»ին երկասացութիւնը (ընդմէջ ոստիկանապետ փաշային եւ յեղափոխական Մաթիկին) ու ջանացէք կանգ առնել: Պիտի զգաք, որ պիտի չկրնաք»⁴:

Ռուսական վէպի անհուն ճգողութիւնը երկխօսութեան եւ գործողութեան անտես կապն է, որն ապահովում է ներապրումի զօրութիւնը, սա առաջին: Եւ երկրորդ, փիլիսոփայութեան գաղափարագրումը բխում է արարքների տրամախօսութեան հեղինակային ծաւալումներից: Հարցը գրական սուզումից այն կողմ բացայայտում է Յ. Օշականի՝ կեանքի ըմբռնման խորքը, որն աղերսում է Ֆ. Դոստոեւսկու գեղագիտական հայեցակէտերին եւ շահագրգռում է նրան:

Համադրելով վիպաշարերի ընթերցման եւ անհրաժեշտ վերընթերցման մեթոդաբան իր եւ ռուս ամեհի վիպասանի առումներով՝ կատարում է գրողական տպաւորութեան՝ նմանութեան եւ տարբերութեան վերհանումի փորձը, քանի որ զուգահեռը մնում է գայթակղիչ եւ ծանրութիւն բարձրացնելու չափ պարտաւորիչ հայ գրողի յանդգնութեան դիմաց. «Աղէտ մըն է «Քարամազով եղբայրներ»ու ընթերցումը, հրաբուխի մը մօտիկ դրդումներ թելադրող: Երկրորդ ընթերցումը նոյն գործին՝ հեշտանքներու հեշտանքը: Օշականի վէպին մէջ (նկատի ունի «Մնացորդաց»ը – Ս.Դ.) վերընթերցումը, գէթ այս տողերը գրողին հաշտոյն, կործանում մը չէ եղած»⁵:

Չի ուշանում վիպագրի անմիջական խոստովանական երկխօսութիւնը ընթերցողի հետ, որը պրուստեան «շեղումի» ռճաւորման ծաւալում ունի եւ պարտադրում է «մի այլ ժամանակի մէջ» ուրիշ ընթերցող-

⁴ **Նոյն տեղում**, էջ 167:

⁵ **Նոյն տեղում**, էջ 165:

քննադատի մեկնական արձագանգ: Այսպէս, հեռանալով պատմողի առաջադրութիւնից՝ Յ. Օշականը դիմում է իր ներքին պահանջմունքին՝ ընթերցողի հետ անկեղծանալու, բուն վիպական թոյլատրելի սահմանից մի պահ կտրուելու գայթակղութեանը, ինչը իր գրական անբաժան ոճն է. «Ձեզի հետ չունիմ յանձնառութիւն տետողութեան ընթացիկ սպառումով մը «կեանքը» հետապնդելու, նուաճելու եւ զայն ձեր ընկալչութեան բերելու: Չեմ ալ մտածեր օգտագործել վիպելու արուեստին շուրջ բազմատարած բայց խնդրական տեսութիւններ, քանի որ կեանքը վեր է քննադատներէն եւ արուեստի տեսաբաններէն հարիւրապատիկ առաւելութեամբ մը»⁶: Կեանքը վեր է ոչ միայն «վէպէն» ու վիպագիրների հոժ «զանգուածէն», այլեւ ընդգրկման անսպառելի զօրութեամբ՝ արուեստի միւս ժանրերի համահաւաք դրսևորումներից:

Շ. Շահնուրը «Վէպին շուրջ» (1936) տեսաբանական բանավէճի որոնումներում դիմում է Յ. Օշականի հանդէպ սուսեր ճօճելու յարձակողական փորձուած մեթոդին այն կանխակալ մօտեցմամբ, թէ «Օշականի մտածումն միակ բառ մը իսկ ոտքի չի մնար, եթէ զայն քննութեան ենթարկենք: (Աւելորդ չ'ըլլար ըսել թէ, ըստ իս, իր մեծագոյն սխալը հետեւեալն է. ֆրանսացւոց մէջ միայն ձեւական գեղեցկութիւն կը տեսնէ: *Որովհետեւ հայ գրագէտը մանաւանդ ձեւով գրագէտ է*): Կը կարծէ որ աղուոր լեզուն, փնտռուած ոճը, գեղեցիկ պատկերը բաւական են գրականութեան մէջ»⁷: Խոստովանում է, որ իր վրայ մեծ ազդեցութիւն է թողել «Ոճիւր եւ պատիժ»ը⁸: Նրա հերոսների մէջ ապրող էակը գաղափար է. «Տոսթեւսկի ոչ միայն կատարեալ կառուցում ունի, այլեւ *անբնականօրէն* կատարեալ կառուցում ունի: Ընթերցողը պիտի ըսէ անպայման. «Կեանքի մէջ կարելի չէ, որ այսքան շատ դէպքեր, *բռնորն* ալ աննպաստ, այսպէս յաջորդեն իրարու եւ Ռասքոլնիքովը մղեն դէպի անդունդ: Մենք գիտենք, թէ կեանքը, ինչպէս կը վկայէ նոյն ինքն Օշական, աններդաշնակ է, խառնակ է, եւ անպայման պիտի գտնուի մէկ պարագայ մը, որ ի նպաստ ըլլայ հերոսին: Չկայ: Այս դէպքերը այսպէս կը պատահին, որովհետեւ Տոսթեւսկի ուզեց, որ պատահին: Եւ Տոսթեւսկի ուզեց՝ որովհետեւ իր հերոսը *ապրող էակ մը ըլլալէ աւել*»

⁶ **Օշական Յ.**, Կեանքին պէս / հեքեաթ մը (մեր ժամանակներէն), Լոս Անճելըս, 1995, էջ 148:

⁷ **Շահան Շ.**, Երկեր երկու գրքով, գիրք երկրորդ, Եր., «Սովետական գրող», 1985, էջ 67:– Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

⁸ **Նոյն տեղում**, էջ 68:

լի՝ գաղափար մըն է»⁹: Ինչպէս գաղափար է ինքնին, ըստ Շ. Շահնուրի, Քրիստոսի խորհուրդը:

Հարկ է նկատել կենսագրական բնութագրիչ մէկ մանրամասն, որը բացայայտում է Ֆ. Դոստոեւկու եւ Քրիստոսի հոգեւին աղերսն ու խորունկ կապուածութիւնը: Երբ Ֆ. Դոստոեւսկին արքորի ճանապարհին էր, իր բարեկամներից Նատալիա Տոնվիզինան հրաժեշտի պահին տալիս է Աւետարան, որն իրեն ուղեկից է եղել դժնդակ այդ տարիներին: Խորհրդանշական էր, որ արքորից վերադարձին՝ 1854-ի Փետրուարի վերջերին, Դոստոեւսկին նոյն կնոջը խոստովանում է. «Իմ մէջ ես ներարկեցի հաւատի խորհրդանիշ, ուր ամէն ինչ պարզից պարզ էր, ահա՛ այն. հաւատալ, որ չկայ Քրիստոսից վեհ, խորը, կարեկիր, բնականաբար խիզախ ու կատարեալ բան, եւ ոչ միայն չկայ, այլեւ ներքին պողոթնուն սիրով ասում եմ ինքս ինձ՝ չի էլ կարող լինել: Դեռ ատելի՛ն՝ եթէ ինչ-որ մէկը ինձ ապացուցէր, որ Քրիստոսը ճշմարտութիւնից դուրս է, եւ դա անգամ *իրողութիւն* լինէր, թէ ճշմարտութիւնը Քրիստոսի մէջ չէ, ուրեմն՝ ինձ համար ատելի լաւ կը լինէր մնալ Քրիստոսի, քան ճշմարտութեան հետ»¹⁰:

Ֆ. Դոստոեւսկու աշխարհը քառս չէ, ինչ է. ինչ վատ բան կայ նրա քառսից ընկրկելու մէջ, որում կարծես Յ. Օշականին մեղադրում է Շ. Շահնուրը. «Արդ, Օշական կը գրէ, անշուշտ, Տոսթոեւսկին ունենալով այժմին առջեւ. «...քառսային, բայց խռովիչ՝ անիկա անտառն է վայրի, ուր կրնաս մոլորիլ»: Բայց քանի որ Տոսթոեւսկի քառսային չէ երբեք, անկարելի բան է անոր մէջ մոլորիլ: Իր կառուցուածքը զարհուրելիօրէն որոշ է, ծանօթ է...»¹¹: Ֆրանսասիաց գրողի պատկերացումով ռուս վիպասանը չի կարող «քառսային» լինել, ուրեմն՝ Յ. Օշականի՝ թէկուզ ակամայ «մոլորուելը» իբր արդարացուած չէ, նրա տեսողական մեղաւորութիւնն է:

Պաշտպանենք Յ. Օշականին. վերջինիս՝ Ֆ. Դոստոեւսկու բաւիղներում «խռովիլն» ու «մոլորիլը» հաստատելու շահնուրեան տեսական դրոյթները, մեր տպաւորութեամբ, բաւարար հիմնաւորում չեն պարունակում, թէ «...Օշական իրաւունք ունի խռովելու, տագնապելու, բայց տարբեր պատճառ մըն է, որ կը խռովէ զինք...»¹²:

⁹ **Նոյն տեղում:**– Ընդգծումները՝ բնագրում – Ա.Դ.:

¹⁰ **Достоевский Ф.**, Полное собрание сочинений в 30 томах, т. 28, кн. 1 / Письма, 1832-1859, Л., изд. “Наука”, ленинградское отделение, 1985, с. 176.

¹¹ **Շահան Շ.**, Երկեր երկու գրքով, գիրք երկրորդ, էջ 69:

¹² **Նոյն տեղում:**

Ու վերջապես՝ կայ քննադատ Օշականի պատասխանը, եւ ոչ այնքան Շ. Շահնուրին, որքան իրեն. «...Ներսէն ապրումը նոյնքան խռովիչ է, որքան ռուս վէպին անտարագելի ձգողութիւնը»¹³: «Հոս հարցը, – գաղափարական–տեսական ընդհանրացումով աւելացնում է մէկ այլ հատուածում, – գրականէն անդին իրողութեան կը մնայ կապուած: Այդ հարցը *կեանքին* հանդէպ Օշականին կեցուածքն է»¹⁴:

Յ. Օշականը հասկանում է՝ ամէն ինչ անհնար է կեանքից ներբեռնել վիպական տարածքներ: Ու գալիս է անխուսափ յուսախաբութիւնը, եթէ կ'ուզէք, գրողական «պարտութիւնը». «Բայց ինչ յիմար, թերի, սուտ է վէպը՝ բաղդատուած կեանքին»¹⁵: Այդ դէպքում ինչպէս է հասցնում նման ընդգրկումով առանձնանալ ռուս վիպասանը:

Յ. Օշականը կարծես թէքէտանական Անկարելիի դրանն է, «...որ պարտաւոր է քանի մը էջի վստահիլ անհուն հոծութիւններ ու անցնիլ...»¹⁶: Պարտաւոր է, բայց կը յաջողի արդեօք...: «Սահակ Պարգեւեան» վէպի գլխաւոր հերոսը, օրինակ, փառամոլութեան բերած թնճուկի շրջապտոյտի մէջ է, սակայն վստահ է վերջնարդիւնքին՝ կ'անցնի:

Գրականութեան մէջ Յ. Օշականը որսում է Ֆ. Դոստոեւսկու տագնապը՝ «մեղքի» եւ «արեան» թաւալումը մարդկային նոր յարաբերութիւններում, որը շրջել է բարոյագիտական ընկալումները: Խղճմտանքի պատուար Քրիստոնէութիւնը եւ Հայր Զոսիմայի հաւատի ողջ համակարգը մարտնչում են մարդկային հոգիների ծուլենների պաշտպանութեան համար:

Ինչո՞ւ է հայոց եկեղեցին որոշ չափով կորցրել ներգործութեան իր կորագիծը ժողովրդական զանգուածների վրայ՝ ռուս մտաւորական եւ խոնարհի դասի երկնառաք աղերսների համեմատութեամբ: Չխորանանք աշխարհիկ պատճառների մէջ: Յ. Օշականի կերպարների համակարգում Զոսիմային եւ Ալեօշային գալիս են յաջորդելու ժողովրդի միջից ելած հայեցողական–փիլիսոփայական փոքր–ինչ դժուարամարս, հանրութիւնից զգալի չափով մեկուսացած տիպարներ՝ Օվակենց Արդար Առաքելը «Ծակ–պտուկը»ից եւ Սամիկ Սամունը «Մնացորդաց»ից:

¹³ **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատոր տասներորդ, էջ 167:

¹⁴ **Նոյն տեղում**, էջ 169:– Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

¹⁵ **Նոյնը**, Սահակ Պարգեւեան / վէպ, Անթիլիաս, 1985, էջ 171:

¹⁶ **Նոյն տեղում**:

Պատահական է «տեղի-անտեղի» յիշատակութիւնը «Ծակ-պտուկը»ի Հաճի Ստեփանի «հաճիութեան» մասին, ինչը քրիստոնէական մաքրութեան խորհուրդ պիտի ունենար այս հերոսի ճակատագրում: Ընդհակառակը, չեղան: Չէր էլ լինելու: «Հաճի» վերադիրը առաւել օքսիմորոն մնաց Ստեփանի խառնակ նկարագրի դիմաց, ճիշդ ինչպէս Ֆէոդոր Պալովիչ Կարամազովի պարագային, որ իր հոգու դատարկութիւնը համարձակուել էր պարպել Չոսիմայի՝ վանահօր առաջ:

Ինչ վերաբերում է Հաճի Ստեփանի՝ տեղ-տեղ երեւացող հակասական վարքագծի եւ հոգեբանական ներքին անհանգստութիւնների, տատանումների կորին, ապա պէտք է ընդգծել, որ կերպարի ընկալումների, հետեւաբար եւ կերպարի մէջ հեղինակը պահպանում է ժողովրդական բարքի ու ամենդրութեան խոյ վերապրումը: Այդպիսին էր եւ Ֆ. Դոստոեւսկու՝ ոճրագործ հերոսների ներաշխարհի թափանցելու եղանակը (յիշենք թէկուզ Ստաւրոգինին, անգամ Կարամազովների հորը՝ Ֆէոդորին, որի պահուածքը ճամարտակելու, հոգեկան դատարկութիւնը ի ցոյց դնելու թուլամիտ քայլ էր, իրականում «մաքրուելու», խելամիտ մարդկանց շարքում իրեն տեսնելու կոյր փափաք), ինչը, մեր կարծիքով, որսացել է Յ. Օշականը եւ որդեգրել գրական ոճերի մատուցման մէջ:

Տնեցիների հոգետր ըմբռնումների դիմաց Օվակենց Առաքելը առաջինը «վստահում էր», ապափնում իր տանը մանկուց մնացած «բորոտ Աւետարանին», որն ընթերցում էր ստեպ-ստեպ անհրաժեշտ մեկնութիւններով, շարունակաբար՝ «պզտիկութեան» շրջանից մինչեւ ծերունական տարիներ, որով իմաստնանում էր: Աւետարանից բխած նրա եզրայանգումները ծանրանիստ էին ու անբեկանելի՝ իբրեւ վերին ճմարտութիւն: Իմաստնացումի ճանապարհին հերոսը փիլիսոփայական հայեցողութեամբ գտնում էր, որ «մարդկութեան ամէնէն մեծ ոխերիմը» եղել ու մնում էր Սաղայէլը, իսկ իր պէս «ծերուկին համար մեղքը աւազակութիւն մըն էր Աստուծոյ կալուածներէն», նոյն «թանձր ու մեղքի մը չափ տգեղ անէծքով»¹⁷ խարանելու պատրաստ Սաղայէլի «հնարամիտ աւազակութիւնը»: Արդար Առաքելը «վիրաւորում մարգարէի մը պէս... բազկատարած անէծքով մը վռնտեց իր «նզովից արմատ» հարսը, երբ անիկա պարզեց ծրագիրը»¹⁸, այսինքն՝ վիժումի աստուածամերժ քայլը:

¹⁷ **Նոյնը**, Ծակ-պտուկը, Անթիլիաս, 1996, էջ 97:

¹⁸ **Նոյն տեղում**, էջ 98:

Նրա եւ կնոջ՝ Տայճոնի ներաշխարհում անընդունելի էին նմանօրինակ հակաքրիստոնէական մօտեցումները, այդ թւում՝ Թումասիկի մօրը՝ վշտահար Հեղնա հարսին ներկայացուած որոշումը. «Տղան պէտք էր *անցընէր*», ինչի դիմաց փրկարար էր կարծես աւագ սերնդի կրօնական սրբասացութիւնը, թէ՛ «...տղան ապրէր պիտի»¹⁹, ինչը վիճարկումների, բախումի բուռն վիճակներ էր ստեղծել: Աստուածաշնչեան մի շարք օրինակները, որ բերում են Առաքելը, Տայճոնը եւ հարսը, իրար ընդմիջելով, հակադրուելով կամ համակերպութեան ճանապարհներ հարթելով դէպի յարաբերական ճշմարիտ ելքեր, հաշուի չէին առնում մէկ նախապայման. «Այս ամէնուն մէջ ոչ մէկը բան մը հարցուց «հարս» Նազիկին»²⁰:

Առագաստի մահճից շարտուած կնոջ անակնկալ նոր, երկրորդ վճիռը փրկարար էր նրա համար. յայտնում է իրեն կուսութիւնից զրկած եւ ընդամէնը երկու շաբաթից թոքախտին զոհ գնացած Թումասիկի հարազատների՝ յիշատակի հետ դեռ չհաշտուած բարի ընտանեկան միջավայրում: Դա, ի հարկէ, լուծում չէր, բայց պահի դրութեամբ, ի շարս այլ հանգամանքների, մարդկային ճանաչողութեան հանգրուան դարձաւ աղջկայ բեկբեկուն կեանքի այս շրջանում, իսկ խորատես ընթերցողի ընկալումներում, Դոստոեւսկու Ջոսիմայի փիլիսոփայութեան համանմանութեամբ մուտքի հնարաւորութիւն՝ Արդար Առաքելի, նրա որդու՝ Օվակի «շուրջիներու» միջավայրում:

Ֆ. Դոստոեւսկու եւ Յ. Օշականի բարոյախօսական դատողութիւններում ընդգծում է, որ նոր ժամանակները եկել-խառնել են ասանդոյթի հոգեւոր-կրօնական անխախտ թուացող ընկալումները: Դա հին հայեացքի բարոյագիտական տեղաշարժն է, որ արձանագրում են երկու գեղագետները իրենց՝ հայկական եւ ռուսական ազգային ներքին բովանդակութեամբ բնագրային կառոյցներում: Աւետարանի հանգուցային որոշ հատուածների վերընթերցումների ժամանակ Արդար Առաքելը նոր հակադիր արժէքներ է գտնում որդուն կորցրած Հեղնայի ներապրումների վերիմաստատուման մէջ: Հայեցողական նոր սահմանագիծ է բացուած. «Հեղնան արցունքով ու ողբով հետեւեր էր վիճաբանութեան: Անոր վճռական ու յուսահատ վիշտը ընկճեց Արդարին ալ ընդդիմութիւնը»²¹:

¹⁹ **Նոյն տեղում:**– Ընդգծումը՝ բնագրում – Ս.Դ.:

²⁰ **Նոյն տեղում:**

²¹ **Նոյն տեղում:**

Թերեւս առաջին անգամ արդարութեան սկզբունքները տեղի տուեցին Արդար Առաքելի քրիստոնէական հայեացքների անսասան թուացող համակարգում, երբ արդար համարեց հարս Հեղնայի թէկուզ յուզախառն ընդվզումը: Ժամանակն ուրիշ է: Քայքայումն սկսուել է: Ոչ ոք այլեւ չի դիմում Առաքելի արդարութեանը:

Անլուր ողբերգութեան միջով էին անցնում «Կարամազով եղբայրներ» վիպաշարի կանայք: Հենց առաջին գրքի սկզբնական հատուածներում, օրինակ, եղբայրների հօր՝ հարբեցող ու այլասերուած Ֆէոդոր Պալլովիչի երկու տարաբախտ, երիտասարդ մահացած կանայք՝ Ադելաիդա Իւանովնան եւ Սոֆիա Իւանովնան, փորձում էին պայքարել ամուսնու այլանդակ վարքի դէմ: Յատկապէս յիշենք նրանցից առաջինին, որ ծեծի դիմեց ծեծի դիմաց, նաեւ փախաւ, լքեց տղային, մեծ քաղաքում ամուսնացաւ սեմինարիստ ուսուցչի հետ, բայց նետրդերը չդիմացան, եւ մահացաւ: Երկրորդը դիմակայեց ընդամէնը ութ տարի՝ այն աշխարհ մեկնելուց առաջ թողնելով երկու զաւակ: Ֆէոդոր Պալլովիչի այլասերումը սահման չէր ճանաչում: Մեր կարծիքով, Յ. Օշականը Հայրապետն Հաճի Ստեփանի դիմանկարը կերտելիս կարծես արտանկարում է Դոստոևսկու այս հերոսին, որը տուն վերադառնալիս օրգիաներ էր սարքում հետը բերած թերթաբարոյ կանանց հետ՝ հենց կնոջ ներկայութեամբ²²: Գուցէ եւ նկատի ունէր ավելի վաղ Պետրոս Մեծի համանման բացորոշ վարքը կնոջ հանդէպ: Գրեթէ նոյն օշականեան դիպաշարի գայթակղութիւնը՝ կնոջ վրէժխնդիր արարքի յաւելուածով:

Ի տարբերութիւն հայր Կարամազովի՝ տարիներ շարունակ նման թափառիկ, այլասերումի վարժուած Հաճի Ստեփանը գուցէ եւ ի ծնէ ֆիզիքապէս անկարող էր եղել զաւակ ունենալու, ինչն արդէն չարացրել էր նրան աշխարհի դէմ: Ուշ տեղեակ լինելով կնոջ վրէժխնդիր պատասխան դաւաճանութեանը եւ յիփոթեանը, ժառանգի հեռանկարով տարուած՝ սկզբում հանդուրժել էր, ապա չարաչար կորստեան մատնել տասնհինգամեայ ծառային, որը թերեւս ստիպողաբար էր ընդառաջ գնացել ասագ Նազիկի՝ ամուսնու այլասեր արարքների դիմաց ցուցադրական հրաւերին:

Իսկ ահա «Մնացորդաց»ի մտայնացումը, եթէ «փառասէրի» կողքին դնենք «յանդուզն» եզրը, իսկապէս հեղինակին տանում էր դէպի եւրո-

²² Տե՛ս՝ **Достоевский Ф. М.**, Полное собрание сочинений в 30 томах, т. 14, Л., изд. “Наука”, ленинградское отделение, 1976, с. 13.

պական հեղեղավէպի փորձը, դէպի «Կարամազով եղբայրներ», դէպի «Կորսուած ժամանակի փնտռտուքներում»ի յայտնութիւն:

«Մնացորդաց» վիպաշարը, գտնում է որդի Օշականը, «...ամէնէն փառասէր եւ վտանգաւոր փորձն է հայ վիպագրութեան պատմութեան մէջ: Անիկա փառասէր փորձ մըն է, որովհետեւ առաջին անգամ ըլլալով՝ վիպագիր մը յանձն կ'առնէր ներկայացնել արդի հայոց պատմութեան ամէնէն ճակատագրական եւ ողբերգական 25 տարիներու կեանքը (1890էն 1915)»²³:

«Մնացորդաց» վիպաշարը ամէնից շատ աղերսներ ունի Ֆ. Դոստոեւսկու գրական ըմբռնումի հետ, որին անուանում է «վէպին աստուած»: Իսկ իր վէպի «զգայարանքը» «հազարաւոր էջերի վրայ տարածուելու սահմանուած սկզբնական պոռթկում մըն է..., ստիպուած է չպաղիլ ու ծանր քալել, լաւաներու նման»: Եզրակացութիւնը վերստին կապուած է ռուս վիպասանի հետ. «Յետոյ, ինչ որ ձեզի կ'այցելէ Տոստոեւսկիի մօտ – շփոթութիւն ընդմէջ *քմայքին եւ արարքին*, յաճախ ունի գոյութիւն Օշականին մօտ»²⁴: Շտկումի մեր վերջին հնարաւորութիւնը՝ վիպագիր Օշականին. եւ ոչ թէ «յաճախ», այլ՝ մշտակայ:

SUMMARY

DOSTOYEVSKI AND OSHAKAN. PETITIONS

Suren Danielyan

The article includes parallel research points of Russian and Armenian two great novelists' works. The author paid attention to relationships of characters in novels “Brothers Karamazov” by Dostoevsky and “The Remnants” by Hakob Oshakan, also to moral questions of Oshakan's novel “Tsak-ptuky”. It is not superfluous to emphasize the mission of Christianity and the conscience in two writers' literary world. The conclusion is that Dostoevsky essentially contributes to determine Oshakan's place in Armenian national literature paradigm, as a leader of Armenian fiction.

²³ «Ազգակ» / օրաթերթ, Պէյրուօ, 1973, թիւ 128, 6 Օգոստոս, Երկուշաբթի:

²⁴ Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատոր տասներորդ, էջ 166-167:– Ընդգծումները՝ բնագրում – Ա.Դ.: